ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2
Հեռ.՝ (+374 10) 600 701, 600 704
Հեռապատճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

№ 01/01/1805-20
«01» 10 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարար՝
պարոն Դավիթ Տոնոյանին

ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարար՝
տիկին Զարուհի Բաթոյանին

Ի գիտություն՝
ՀՀ արդարադատության նախարար՝
պարոն Ռուստամ Բադասյանին

ԴԻՄՈՒՄ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի պարոն Տոնոյան,
Հարգելի տիկին Բաթոյան,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներով,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմի ժամանակ զորահավաքի շրջանակներում մարտական գործողություններին մասնակցող անձանց աշխատավարձի պահմանման և վճարման հարաբերությունները ՀՀ օրենսդրությամբ հստակ կարգավորված չեն կամ առնվազն տարընկալումների տեղիք են տալիս, խնդրում ենք պաշտոնապես պարզաբանել ստորև ներկայացվող իրավական հարցը.

➢ **<u>Հարցադրումը</u>**

Արդյոք Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 27.09.2020թ. թիվ 1586-Ն որոշման Հավելվածի 1-ին կետով հայտարարված ընդհանուր զորահավաքի շրջանակներում հավաքագրված և ռազմական գործողություններին մասնակցելու համար Հայաստանի կամ Արցախի Հանրապետության սահմաններ ուղարկված աշխատող տղամարդկանց աշխատավարձը ռազմական գործողությունների ամբողջ ժամանակահատվածի համար վճարելու է Հայաստանի Հանրապետությունը:

➢ **<u>Ներկա իրավիճակը</u>**

Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ընդհանուր զորահավաքի շրջանակներում ծանուցագրեր են ստանում և ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության և Արցախի սահման են մեկնում աշխատող տղամարդիկ **(այսուհետ՝ Պահեստազորայիններ)**, որպիսի պարագայում առաջանում են նրանց աշխատանքային հարաբերությունների շարունակմանն առնչվող իրավական հարցեր:

Այդ հարցերից հիմնականը հանգում է հետևյալին՝ արդյոք Պահեստազորայիններին պետք է տրամադրվի պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար արձակուրդ և եթե այո, ապա արդյոք նրանք իրավունք ունեն ստանալ վարձատրություն արձակուրդի ընթացքում:

➢ **<u>Գործող իրավական կարգավորումը և իրավական բացը</u>**

Պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար արձակուրդ տրամադրելու հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի (**այսուհետ՝ Օրենսգիրք**) 175-րդ հոդվածով, մասնավորապես չորս կետում նշված են դեպքերը, իսկ 5-րդ կետը բլանկետային է, քանի որ հղում է կատարում ՀՀ օրենսդրությանը: Այսպես, Օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *Աշխատողն ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով աշխատատեղը (պաշտոնը)՝ ...* ***<u>Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:</u>***

Նշված հոդվածի 1-ին մասի չորս կետերով չի կարգավորում Պահեստազորայինների հետ կապված հարաբերությունները, իսկ 5-րդ կետի մասով՝ ՀՀ օրենսդրությամբ վերաբերելի խնդրին առնչվող մեկ դեպք է նախատեսված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 60-րդ հոդվածի 5-րդ մասով:

Ըստ այդ նորմի՝ *զինվորական վարժանքին կամ զորավարժությանը մասնակցելու ընթացքում քաղաքացու* ***հիմնական աշխատանքի վայրում*** *(անկախ կազմակերպական-իրավական ձևից)* ***պահպանվում են քաղաքացու***

աշխատատեղը (պաշտոնը) և միջին աշխատավարձը: *Գործատուի կողմից (անկախ կազմակերպական-իրավական ձևից) սույն մասի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:*

Ինչպես տեսնում ենք, ՀՀ օրենսդրությամբ սահմանված է միայն Զինվորական վարժանքին կամ զորավարժությանը[1] մասնակցելու դեպքը, որը մասնակցի կյանքի համար վտանգավորության բաղադրիչով խիստ նվազ է համեմատած ռազմական գործողությունների հետ:

Օրենսդիրը սահմանել է, որ զինվորական վարժանքներին և զորավարժություններին մասնակցող տղամարդ աշխատողներին վճարում է այն կազմակերպությունը (մարմինը), որի առաջադրած պարտականությունները կատարում է աշխատողը, տվյալ դեպքում՝ պետությունը:

Նման իրավական կարգավորում է սահմանում Օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ *սույն հոդվածի 1-ին մասով,* ***բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետի,*** *սահմանված՝* ***պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար աշխատանքային պարտականությունների կատարումից ազատված աշխատողի միջին աշխատավարձը վճարում կամ հատուցում է այն կազմակերպությունը (մարմինը), որի առաջադրած պարտականությունները կատարում է աշխատողը,*** *իսկ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների միջին աշխատավարձը վճարվում է աշխատողի հիմնական աշխատատեղից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:*

Վերոգրյալը հաշվի առնելով փաստվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ Պահեստազորայինները զորակոչվում են զինվորական վարժանքների, ապա նրանք ստանում են պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար արձակուրդ, որի ժամանակահատվածի համար նրանց վճարվում է աշխատավարձ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

➢ **<u>ՀՀ փաստաբանների պալատի կողմից առաջարկվող տարբերակը</u>**

Օրենսդիրը կարգավորել է պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար արձակուրդ տրամադրելու հարաբերությունները զինվորական վարժանքին կամ զորավարժությանը մասնակցող աշխատողների դեպքում, սակայն չի կարգավորել զորահավաքի արդյունքում ռազմական գործողություններին մասնակցած աշխատողներին վերը նշված արձակուրդ տրամադրելու և վարձատրելու հարաբերությունները:

---

[1] ***զինվորական վարժանքներ*** *(հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումներ)* ***կամ զորավարժություններ*** *(զորախաղեր)՝ զինված ուժերի զորահավաքային պատրաստականության վիճակը ստուգելու նպատակով (58-րդ հոդված)*

Իր բնույթով ռազմական գործողություններին մասնակցելը Պահեստազորայինների համար շատ ավելի վտանգավոր է կյանքի իրավունքի պահպանման համատեքստում և շատ ավելի կարևոր է պետության համար՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի սահմանների պաշտպանության տեսանկյունից:

Այդուհանդերձ, բովանդակային տեսանկյունից զինվորական վարժանքը կամ զորավարժությունը նման են ռազմական գործողություններին: Ավելին՝ Պահեստազորայինների համար կարող է կազմակերպվել նախնական զորավարժություն կամ զինվորական վարժանք և միայն դրանից հետո հնարավոր է, որ թույլատրվի նրանց մասնակցությունը պատերազմական գործողություններին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ *եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա):*

Մեր կարծիքով տվյալ դեպքում առկա է իրավական բաց, որը կարող է լուծվել անալոգիայի ինստիտուտի կիրառման միջոցով[2], որի դեպքում Օրենքի 60-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառելի կլինի նաև Պահեստազորայինների նկատմամբ:

Ամփոփելով վերոգրյալը կարծում ենք, որ սույն հարցման իմաստով Պահեստազորայինները օգտվում են պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար սահմանված արձակուրդից, իսկ այս արձակուրդի ընթացքում ստանում են իրենց աշխատավարձի չափով վարձատրություն Հայաստանի Հանրապետությունից:

➢ **<u>ՀՀ փաստաբանների պալատի շահագրգռվածությունը պարզաբանում ստանալու հարցում</u>**

ՀՀ փաստաբանների պալատը, հանդես գալով որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ, շահագրգռված է վերը նշված հարցի պարզաբանումը ստանալու համար հետևյալ պատճառներով.

- փաստաբանության ինստիտուտը ապահովում է քաղաքացիներին իրավաբանական օգնությամբ, ուստի նշված պարզաբանումն առաջին հերթին կարևոր է քաղաքացիներին փաստաբանների կողմից հնարավորինս գրագետ իրավական օգնության տրամադրելուն օժանդակելու համատեքստում.

[2] Անհրաժեշտության դեպքում պետք է հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ

- ՀՀ փաստաբանների պալատը հանդիսանում է նաև գործատու աշխատողների համար, որոնց շրջանում արդեն իսկ առկա են ռազմական գործողություններին զորակոչված անձինք:

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ
Արա Զոհրաբյան